

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՏԵՍԻԼԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ա. Գ. ՄԱԴՈՅԱՆ

Առաջին հայացքից աննշան թվացող, բայց շատ հետաքրքրական ու արժեքավոր հուշարձան է Մեսրոպ երեց Վայոցձորեցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի» երկը, որը բարձր է գնահատվել անցյալում և մեր օրերում, հատկապես երբ ակագ. Աշոտ Հովհաննիսյանը հետամտեց ազատագրական ավանգարդույցին, բացահայտելով այդ «Պատմության» էությունը:

Խոսելով վարժագրական գործերի մասին, Մ. Աբեղյանը գրել է. «Այդ տիպի երկերն ընդհանրապես անծանոթ են մնում մեր գրադատներին, իսկ գրանք մեր հին գրականության վեպերն են, գեղեցիկ արվեստով հորինված»¹: Գեղարվեստական ընթերցանության համար է հորինված նաև Ներսես Պարթևի վարքը: Բայց միայն դրանով չի պայմանավորված նրա արժեքը: Մեսրոպ Վայոցձորեցու հաղորդած տեղեկությունները մասամբ հիշվում են V դարի մեր պատմիչների գրքերում, իսկ մի կարևոր մասը, ինչպես ինքն է ասում, ծաղկաքաղ է արել «ի Հայոց Մնացորդաց յԱրևելից Գրոց»²: Այս գրքերի մասին ոչ մի այլ հիշատակություն չկա մեր մատենագրության մեջ, բացի Թովմա Արծրունու խոսքից, որը նույնպես անբավարար է դրանց մասին պատկերացում կազմելու համար: Հիշյալ գրքերի հետքերն, ուրեմն, պիտի փնտրել այս երկուսի երկերում. մի հանգամանք, որ ավելի է բարձրացնում X դարի այս պատմիչների գրքերի արժեքը³: «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի» երկի գլխավոր աղբյուրը, սակայն, Փավստոսի «Հայոց պատմությունն» է. բացի այդ, ռատագործված են նեոի գալստյան և վերջին դատաստանի աստվածաշնչյան պատկերացումները: Բանասիրության մեջ ճիշտ է նկատված Վայոցձորեցու երկի կապը նաև Կեղծ-Մեթոդիոսի բնագրի հետ: Եվ եթե վերանանք դրանցից, կմնա գլխավորը՝ ժողովրդի հոգևոր ու քաղաքական ազատության ակնկալությունն ու հույսը, քանի որ, ինչպես դիտել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, տեսիլները աստվածաշնչական պատկերացումներով արծարծում էին հայ ժողովրդի ազատագրական երազանքները:

Պատմության մեջ Վայոցձորեցին նախ խոսում է Ներսեսի նախնիների՝ Լուսավորչի տան մնացորդների, հետո Նեոսեսի ու նրա ժամանակակիցների մասին: Վարքի հիմնական նյութը, սակայն, տեսիլն է. մահից առաջ Ներսես Պարթևը մարգարեանում է, գուշակում Արշակունի հարստության և Պարթևների կաթողիկոսական տան անկումը, պարսիկների՝ Երուսաղեմը գրավելը և խաչափայտը գերելը, փրկությունը՝ հույների ձեռքով, սրանց ուժի խորտակումը «աղեղնավորների» կամ «նետողների» կողմից, հիմնահատակ կոր-

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. I, էջ 353:

² «Սուրբ Հայկականք», 2, Վենետիկ, 1853, էջ 137—138:

³ Հմմտ. «Աբրահամու խոստովանողի Վկայք Արևելից, թարգմանութիւնք յասորականէն», աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյանի, էջմիածին, 1921, էջ XIV և վերնադիրը՝ «Երանելոյն Վփրեմի յԱրևելեան Գրոցն ասացեալ գրաւանդակն»:

ծանված Հայոց աշխարհի փրկութիւնը հռոմայեցոց՝ «Ֆռանկների» զենքի ուժով: Դրանից հետո, ըստ գուշակութեան, սահմանվելու է լիակատար արդարութիւն ու խաղաղութիւն: Ակներն է, որ լավագույն ապագան, ժողովրդի դարավոր երազանքը ընկած են պատմութեան հիմքում, որպէս նայատակակետ, որի ճանապարհին բնութագրվում է նրա ակնկալութիւնների, նաև կողմնորոշումների կորագիծը:

Ներսէսի մարգարեութեան նկատմամբ ընթերցողին հավատ ներշնչելու համար Մեսրոպը նախապէս պատմում է սրբի հետ կապված այլ տեսիլ-գուշակումներ, և ասում, որ դրանք ճշտիվ կատարվել են: Մի տեղ, օրինակ, նա գրում է. «Կատարեցաւ բան առն աստուծոյ սրբոյն Ներսիսի. և ամենեքեան զարմանային ընդ արագ կատարումն բանից նորա»⁴: Բնականաբար ընթերցողին մնում էր հավատալ նաև վերջին, ամենակարևոր գուշակութեանը: Եվ պետք է նշել, որ Մեսրոպի երկը մեծ հեղինակութիւն է վայելել ամբողջ միջնադարում: Վարքի մեղ հասած հնագույն ձեռագիրն ընդօրինակողը այդ երկը համարում է «հիահրաշ պատմութիւն»: Հետագայում Վայոցձորեցուն անվանել են «վայելչահիւս գրիչ վարուց և կենաց սրբոյն Ներսիսի»: Բոլորովին պատահական չէր, որ Մադրասում Շահամիրյանի խումբը «Այբբենարանից», «Հորդորակից» ու «Որոգայթից» հետո, 1775 թ. հրատարակեց Մեսրոպի Պատմութիւնը, իբրև «խրախուսելի» մատչան՝ «ի հոգի և ի մարմին խայտալոյճ մերասեռ ընթերցասիրաց»⁵: Այս արժեքավոր գրքից օգտվել են բազմաթիվ գրողներ, ժամանակագիրներ, պատմիչներ (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Մեծ, Ստեփանոս Ռոշբա և այլն): Ներսէսի մարգարեութիւնը հիշում են գրեթե բոլոր նրանք, ում վիճակվել է խոսել Հայոց աշխարհին եկած պատուհասների մասին: Նկարագրելով, օրինակ, «անաստվածների» վայրագութիւնները, Գրիգոր Դարանաղցին ասում է. «...և այսօր տակաւին դեռ այնպէս են մեր վայանքներն (վանքերն) յԱրդրումէն ի վայր, կանանց տունք և քրդատունք են, ո՛չ մշտնջենսուոր ժամակարգութիւն, ո՛չ պատարագ, ո՛չ կարգ, ո՛չ սաղմոսերգութիւն, որպէս ասաց Մեծն Ներսէս թէ՛ Տեղիք սրբոցն եղիցին օթեանք անաստուածիցն»⁶: Այս խոսքի աղբյուրը Մեսրոպի երկն է: Այնտեղ Ներսէսն ասում է. «Եւ սուրբ տեղիք աթոռոց հայրապետութեանն Հայոց՝ եղիցին բնակութիւն և օթեան ազգացն հեթանոսաց»⁷: Բազմաթիվ այսպիսի հիշատակութիւններից բերենք մեկը ա.

Ներսէս հայրապետըն մեր մարգարէս բանին վրկայէ,
Թէ Կարմիր գըլովարն ելցէ և զՀայոց երկիրն աւերէ...⁸

Ի միջի այլոց, Մեսրոպից ուրիշ գործեր էլ են մեղ հասել («Բան վասն ողջունի», «Մեկնութիւնք Հինգից առածիցն»), բայց նրա անունը մեր մատենագրութեան մեջ մնաց Ներսէսի վարքի շնորհիվ, որի մեջ արտացոլված են հաջ ժողովրդի դարավոր տառապանքը, մտասկեռ ձգտումն ազատութեան և ցավա-

⁴ «Առփերք», էջ 42:

⁵ «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց, արարեալ յամենէ Մեսրոպայ Քահանայէ...» Մադրաս, 1775, էջ 141:

⁶ «Ժամանակագրութիւն Գրիգորի վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ», Երուսաղեմ, 1915, էջ 73:

⁷ «Առփերք», էջ 93:

⁸ Ղ. Ա լ ի շ ա ն, Հայապատում, Ա, էջ 594:

լի անվստահությունը՝ սեփական ուժերի նկատմամբ, որի գլխավոր պատճառը իշխանների անմիաբանությունն էր: Պատմության մեջ հենց այդպես էլ ասվում է. «Արդ սկիզբն աշխարհաց աւերածոյն Հայոց ի նենգութենէ եղիցի և յանհնազանդութենէ միմեանց. զի ոչ հնազանդին իշխանքն, այլ բաժանին յիրաքանչիւր գաւառս, և ոչ հասցեն միմեանց ի թիկունս, այլ թշնամեացն կողմն եղիցին»⁹: Սա խրատող-կողմնորոշող, դաստիարակիչ նշանակություն ունեւոր անպայման և ըստ էության միաբանության կոչ էր: Հայրենասիրական այս գաղափարներն էին պայմանավորում Մեսրոպի երկի նկատմամբ ցուցաբերված մեծ հետաքրքրությունը ամբողջ միջնադարում: Եվ բնական էր, որ բացի զանազան կարգի արձագանքներից, հանդես գային նաև տեսիլի շափածո մշակումներ:

Հայտնի է, որ XVII դարի իտալական միսիոներ Մ. Ֆերուրը 1675 թ. Փարիզում հրատարակված «Թուրքիայի ներկա վիճակը» ֆրանսերեն գրքում խոսում է Ներսեսի մարգարեության և դրա շափածո մշակման մասին: Հայերը, ասում է նա, ձեռքից ձեռք էին վերցնում, նախանձախնդրությամբ անգիր սովորում, ներշնչանքով արտասանում տեսիլի շափածո մշակումը, որի հեղինակը նրանց մեծերից նույնանուն մի ուրիշն էր: Ո՞վ կարող էր լինել հայոց «մեծերից նույնանուն մի ուրիշը», եթե ոչ պարթևյան մի այլ մեծ Ներսես՝ Շնորհալին: Այս առթիվ Ա. Հովհաննիսյանը նկատում է՝ «Ակնարկը թերևս Շնորհալու մասին է»¹⁰: Առաջին հերթին այս կապակցությամբ Շնորհալուն է հիշում նաև Հակոբ Անասյանը, բայց հետո, անհավանական համարելով այդ ենթադրությունը, կարծում է, որ տեսիլի մշակողը XVII դարի հեղինակ Ներսես Մոկացին պիտի լինի: «Կարելի է մտածել, — գրում է նա, — թե գուցե խոսքը վերաբերում է Ներսես Շնորհալուն, որն իր «Ողբ Եդեսիոյ» շափածո աշխատության վերջում շարադրում է ֆրանկների ապագա արշավանքի հույսը արտացոլող տողեր՝ ըստ Ներսես Պարթևի: Բայց պետք է նկատել, որ Շնորհալու տողերը ոչ մի ակնկալություն չեն պարունակում Հայաստանի մասին, այլ վերաբերում են միայն Եդեսիայի ազատագրմանը: Այդ պատճառով հավանական է, որ հիշյալ անձնավորությունը լինի Ներսես Մոկացին՝ XVII դարի առաջին կեսի հայտնի դեմքերից մեկը, իմ անապատի վերանորոգողը: Նրա անունով, ճիշտ է, մենք այժմ չունենք ներսիսյան մարգարեության հիշյալ շափածոն, բայց գիտենք, որ նա դոյություն ունեցող պատմական նյութերի տաղաչափումներ կատարում էր»: Այնուհետև հիշվում են Մոկացու պատմական քերթվածները, և՛ «Այս ծանոթացումից հետո ավելի քան հավանական է, որ ներսիսյան մարգարեության տաղաչափող Ներսեսը պետք է համանուն Մոկացին լինի»¹¹:

Մեզ անհավանական է թվում այս ենթադրությունը: Նախ՝ կարելի է ասել, թե «Շնորհալու տողերը ոչ մի ակնկալություն չեն պարունակում Հայաստանի մասին» կամ «վերաբերում են միայն Եդեսիայի ազատագրմանը»: Այդպես մտածել, նշանակում է նսեմացնել Շնորհալու երկի արժեքը: Մինչդեռ «Ողբ Եդեսիոյի» մեջ ուղղակի ասված է, որ ֆրանկները փրկելու են ոչ թե

⁹ «Սոփերք», էջ 90:

¹⁰ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, Երևան, 1959, էջ 263:

¹¹ Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 53—54:

միայն Եղեսիան, այլ բոլոր քրիստոնյաներին, այդ թվում, բնականաբար, նաև հայերին: Սա նույնական է ներսեսի տեսիլի հետ, և իզուր չէ, որ Մ. Աբեղյանը գրել է. «Նա (Շնորհալին) դարձել է երգիչ իր շրջանի արևմտյան հայության սպասելիքների»¹²: Մյուս կողմից, ինչպես տեսանք, Հ. Անասյանը իբրև Ներսես Մոկացու օգտին խոսող փաստ հիշում է նրա «պատմական նյութերի տաղաչափումները»: Եթե այս հանգամանքը բավարար հիմք է այդպիսի ենթադրության համար, ապա նշենք, որ Շնորհալին ևս պատմական նյութեր մշակել է:

Այս հարցի կապակցությամբ անհետաքրքիր չէ հետևյալ փաստը. Վիեննայի մատենադարանի № 169 ձեռագրի («Հաւաքածոյ ոտանաւոր պատմականաց») 92ա—101ա էջերում կա «Վարք Մեծին Ներսէսի Պարթևի Հայոց կաթողիկոսի, զոր արարեալ է Տեառն Ներսէսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի, ոտանաւոր շափով»¹³: Այս քերթվածը, սակայն, հեռու է Շնորհալու վայելուչ ոճից, բացի այդ գրեթե բոլոր մյուս ձեռագրերում վերագրվում է Առաքել վարդապետներին՝ կա՛մ Սյունեցուն, կա՛մ Բաղիշեցուն¹⁴, և բանասիրության մեջ ճիշտ է նկատված, որ պատկանում է Առաքել Բաղիշեցու գրչին¹⁵:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագիրն արտագրողը կամ օրինակել է մի գրչագրից, որտեղ իբրև հեղինակ հիշված է եղել Շնորհալին, կամ ձեռքի տակ ունենալով անանուն քերթվածը և գիտենալով, որ վերջինս այդպիսի մի գործ ունեցել է, վերագրել է նրան: Տեղին է այս կապակցությամբ հիշել Ղ. Հովնանյանի մի դիտողությունը. «Հեղինակություն անանուն կամ հետնագույն գրվածոց՝ այնպիսի անձանց կընծայվի, որոց նմանօրինակ գրվածոց մատենագիր ըլլալն ամենաթանոթ է»¹⁶: Կարծում ենք, որ Մ. Ֆեբուրի ակնարկած «նույնանուն մի ուրիշ մեծ անձնավորությունը» ներսես Մոկացին չէ (քանի որ նա, ի միջի այլոց, եղակի մեծություն էլ չէ), և հավանական է, որ, ինչպես ենթադրել է Ա. Հովհաննիսյանը, Շնորհալին լինի: Թերևս Ֆեբուրի խոսքը «Ողբ Եղեսիոյի» վերոհիշյալ հատվածի կամ Վիպասանության՝ Ներսես Պարթևին վերաբերող հատվածի մասին լինի¹⁷: Անհնարին չէ, վերջապես, որ բանաստեղծը հատկապես անդրադարձած լինի տեսիլին:

Ներսիսյան տեսիլի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն է առաջանում հետազայում, հատկապես XV—XVI դարերում: Եվ դա բացա-

¹² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, Երևան, 1946, էջ 120, Տե՛ս նաև Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, հատ. 1, Երևան, 1957, էջ 267—269, Հմմտ. Ներսես Շնորհալու՝ Գրիգոր Լուսավորչին նվիրված տաղի հետևյալ տողերը.

Կանգնեա՛ վերստին զանկեալս:
Ժողովեա զցրուեալսն ի յագինս:
Գերեաց գերեղարձ լինել
Եւ դառնալ ի տուն հայրենի... («Արարատ», 1895, էջ 196):

¹³ Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, հատ. Ա, Բ գիրք, 1895, էջ 484:

¹⁴ Տե՛ս, օրինակ, Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 1109—1110:

¹⁵ Տե՛ս «Առաքել Սյունեցի և իր քերթվածները», ուսումնասիրությամբ հրատարակեց հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1914, էջ 4—5:

¹⁶ «Հանդես ամսօրյա», 1888, էջ 156:

¹⁷ Տե՛ս «Տեառն Ներսեսի Շնորհալույ Բանք շափու», Վենետիկ, 1928, էջ 577—578:

տրրելի է ժամանակի քաղաքական հանգամանքներով: Սա մի շրջան էր, երբ հայ մատենագրության մեջ քնարական բանաստեղծությունը իր գիրքերը զիջեց վիսպականին, և, Հովասափ Սեբաստացու խոսքով ասած, «սիրու բաները» պակասեցին: Գրվեցին զանազան ողբեր ու «պատմություններ», որոնց առանցքը հարազատ ժողովրդի քաղաքական կեցությունն էր: Դարաշրջանի մթնոլորտը, առաջադեմ գործիչների մտորումները հասկանալու համար հետաքրքիր է Կարապետ վ. Բաղիշեցու «Տաղ արարածոց» բանաստեղծությունը.

Սուտ և անցաւոր աշխարհ,
Ո՛ւր են մեր իշխանք ամենայն,
Տրոհատն հրգօր արքայն,
Պարոնայքն ընդ քեզ գովական:
Զարթիք և տեսէք ձեզ խեղճ,
Եւ ողորմըն կրսկըծական.

Ամէն ազգ յիւրեանց վիճակն,
Եւ եղեալ եմք մեք ցիր և ցան:
Գերի եմք ողորմելի,
Եւ ամէն ազգաց եմք կոխան.
Ոչ ունիմք մեք թագաւոր,
Ոչ հրգօր զինուոր զօրական¹⁸:

Սա բնորոշ էր միջնադարյան Հայաստանի համար առհասարակ: Մեր մատենագրության մեջ գեղեցիկ շատ օրինակներ կան, որոնցով հայրենասեր գրողներն ու գործիչները արտահայտել են իրենց հոգու խռովքը, սրտի ցավն ու բաղձանքը: Մի անանուն տաղի մեջ անձնավորված էջմիածինը տրտնջում է՝ «Թագաւորքն իմ և իշխանքըն ջընջեցան»¹⁹: Այս առումով ուշագրավ է նաև հայրեններից մեկը, որ սկսվում է «Հայե՛ր, ա՛մ, դուք է՛ր կուլայք, գիտէ՛ք որ ձեր տէրըն տի գայ...» տողով²⁰: Հանձարեղ Կոստանգին Երզնկացին դիտում էր, որ դառն ու դաժան ժամանակներ են իրենք ապրում, որ գայլը գառան մորթի է հագել: Բայց նրան ավելի հուզում են ոչ թե նեղ, դասային հարաբերությունները մարդկանց միջև, այլ հասարակության բարոյական վիճակը, հայրենիքի աղետալի դրությունը.

Հազար աւաղ տամ ես, որ Տէրն զմեզ յետնորդս արար
Ի յանցեալ ժամանակի, որ մեզ չըկայ իրք մըխիթար,
Հովիւ չունինք տեսող ու մենք ենք մոլորեալ ոշխար,
Շատ գայլք են հաւձակել ի վերայ մեր խիստ անհամար²¹:

Նրա մտահոգությունն այն է, որ «ի մէջ ծովուս ծփինք, ոչ նաւ ունինք, ոչ նաւավար»: Բայց Երզնկացին հորդորում է չհուսահատվել. «Դարձիր ի յետ նայէ ու գիտ խելօք թատպիր ու ճար». հարկավոր է խելոք միջոց ու ճար գտնել ծովից դուրս գալու, եզր ու հանգիստ գտնելու համար: Բանաստեղծը դրա նախապայմանն էլ գիտե՝ «Պիտէր մեզ նաւապետ»: Նա սիրով է հիշում Մովսեսին, որ «վասըն իւր ազգին՝ զԵգիտպացին սըրովն եհար»: Շատ արժեքավոր են Հովհաննէս վ. Վարադագու և Հովասափ Սեբաստացու ներքոհիշյալ տողերը, որ վկայում են «խելոք միջոց ու ճարի» որոնումների մասին:

Գան, ժողովին իշխանագունք,
Հոնար խլնդրեն ազատութեան,

¹⁸ «Հանդես ամսօրյա», 1937, էջ 337:

¹⁹ «Արարատ», 1895, էջ 196:

²⁰ Ա. Զ ո ս ա ն յ ա ն, «Հայրեններու բուրաստանը», Փարիզ, 1940, էջ 340:

²¹ Կ ո ս տ ա ն դ ի ն Երզնկացի, Տաղեր, 1962, էջ 201:

Ձի սուր Պարսից ոչ յագենայ
Յուզել աբիւն ի Հայաստան...²²

գրում է Վարազագին: Ժամանակին «Գան, ժողովին իշխանադունը» տողի վրա ուշադրություն է հրավիրել Սեյլանը, որ գտել և հրատարակել է Վարազագու ողբը: Համարյա նույնպիսի տողեր է գրել Հովասափը՝ «Ոտանաւոր վասն տեսլեան ներսեսի վասն վերջին ժամանակին, զի դեռ ոչ էր ծնեալ Մահմատն» քերթվածում:

Ապալ ժողովեսցին զօրքն աբիական
Եւ Հայոց քագաւորքն գան միարան...²³

Ժամանակն, ուրեմն, առաջ էր քաշել միաբանության անհրաժեշտության հարցը: Եվ բանաստեղծներն էլ ընդգծում են դրա կարևորությունը: Միջնադարի պայմաններում այս տրամադրությունները, երազանքները, գաղափարները արտահայտելու և վերարժարժեղու լավագույն հնարավորություններ էր ընձեռում ներսիսյան մարգարեությունը, և հասկանալի է, որ բանաստեղծները պիտի օգտվեին դրանից: Բացի տարբեր առիթներով բանաստեղծություններում հանդիպող հիշատակություններից ու վկայակոչումներից, ստեղծվել են նաև տեսիլի հատուկ շափածո մշակումներ: Այդպիսի մի մշակման էր վերաբերում Մ. Ֆեբուրի վկայությունը: Մեզ հասել են Առաքել Բաղիշեցու և Հովասափ Սեբաստացու քերթվածները, որոնց մեջ հեղինակները տարբեր ճանապարհներով են ընթացել դեպի նպատակակետը: Այս հարցում խոշոր դեր են խաղացել ոչ այնքան բանաստեղծական արվեստի տարրեր ըմբռնումները, որքան, թերևս, քաղաքական-հայրենասիրական գաղափարները, հայացքներն ու ձգտումները:

Ինչպես հայտնի է, Առաքել Բաղիշեցին ներսիսյան տեսիլը մշակելիս ձեռքի տակ ունեցել է Վայոցձորեցու երկի ընդարձակ խմբագրությունը, անշուշտ, օգտվել է նաև Հայսմավուրքից: Դրանց պարունակած տեղեկություններին նա սկզբունքորեն նոր բան չի ավելացրել: Առաքելի 360 տողից բաղկացած վերոհիշյալ վիպական քերթվածը տարբեր ձևագրերում կոչվում է երգ, ներբող, պատմություն. «Պատմութիւն Մեծին Ներսէսի»: Այս վերնագիրն էլ ամենից հավանականն է, որովհետև հավաստվում է նաև հեղինակից. «Ասեմ զպատմութիւն Մեծին Ներսէսի»: Բանաստեղծը շատ մանրամասներ է ավելացրել Ներսեսի հետ կապված դեպքերը պատմելիս. որտեղ պատմիչները կարճ ասել-անցել են, սա աշխատում է խոսել հանգամանորեն, երևի պատկերն ամբողջացնելու միտումով: Այդպես է, օրինակ, Ներսեսի կաթողիկոս դասնալու տեսարանը: Փավստոսի ասելով, երբ առաջադրվում է ներսեսի թեկնածությունը, նա «զբողոք բառնալով զանձն անարժան համարեալ, չկամէր շառնոյր յանձն, Իսկ յորժամ տեսնոյր զամենեւեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի դնոյն աղաղակէին առաջի թագաւորին ասէին. Ոչ որ լիցի մեր հովիւ, բայց ի դմանէ. և ոչ որ նստի այլ յայնմ ամոռ, րայց դաւ Իսկ նպիբրե զանձն չկամէր արժանի իրին առ յոժ խոնարհութեան իւրում, ապա ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս և զբամ-

²² «Գեղունիք», 1905, թ. 1—10, էջ 6:
²³ Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, մշխատասիրությամբ Վ. Գեղորդյանի, Երևան, 1964, էջ 99:

բասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ» (Դ, գ)։ Այս նույնը՝ Մեսրոպի պատմելով. «...Սկսաւ ասել զբան շար զանձնէ իւրմէ, և զբամբասանս յանցանաց, և զանօրէնութիւն, զոր չէր գործեալ, թէ անարժան եմ այդմ գործոյդ։ Իսկ իբրև լուեալ բաղմութեան՝ վերստին առհասարակ զաղաղակ բարձեալ ասեն. այգ մեղաւորդ լիցի մեղ առաջնորդ և հովիւ»²⁴։ Իսկ Առաքելը երկարորեն ներկայացնում է տեսարանը, նախ բացատրելով, թե ինչու է Ներսեսը հրաժարվում կաթողիկոսութիւնից.

Քանզի հրաման մերոյ փրկչին Յիսուսի
Կատարեցաւ, որ ասէ յաւետարանի.
Յորժամ կոչեն զքեզ յատեան յանդիսի,
Մի երթիցես բազմիլ յառաջին բարձի։

Պատմիչներն ասում են, որ Ներսեսը շարախոսել է ինքն իրեն, բամբասել, իսկ Բաղիշեցին պատմում է նաև, թե ինչ բամբասանքներ է խոսել։ Այսպես, ամեն ինչի մասին Բաղիշեցին պատմում է հանգամանորեն, այլևայլ մանրամասներով թուլացնում, հասարակացնում բանաստեղծութիւնը։ Զանազան դեպքերի նկարագրութեան հետևանքով, հասկանալի է, բուն տեսիլն անշան տեղ է բռնում։

Հնթերցողին հավատ ներշնչելու համար, հետևելով Վայոցձորեցուն, Բաղիշեցին Ներսեսի կենսագրութիւնը պատմելիս խոսում է նրա այն անեծքների ու կանխագուշակումների մասին, որոնք կատարվել են.

Ասաց զալ թաթարին, որ կատարեցաւ,
Եւ զազգ նետողացն որ երևեցաւ.
Եւ զչաւ թա ազգին զոր աչք մեր տեսաւ,
Անուն գլխաւորին Թամուր կոչեցաւ։
Այլ զնորոգութիւն ասաց հայկազնին,
Որ լինիցի ի գալ ազգաց ֆռանկին
Զինչ որ ասաց եղև, այլև լինիցին.
Զոր սուրբ հոգին յայտնեաց մեծի Ներսէսին։

Ինչ որ ասաց՝ եղավ և լինելու է։ «Զնորոգութիւն ասաց հայկազնին» — լուսավոր այս հավատն էլ քերթվածի գլխավոր արժանիքն է։

Ներսեսի կաթողիկոսութեան շրջանում երանելի կյանքով էր ապրում Հայաստանը, ինչպես Գրիգոր Լուսավորչի ժամանակ.

Եւ զամենայն երկիր. որ զայս լսէին,
Հայաստանեայց ազգիս երանի տային։
Ասեն, թէ երանի ազգիս հայկազան,
Որ այնպէս առաջնորդ ունի սրբազան,
Փառաւորեալ աստուած յաւիտենական.
Որ նորոգեաց կրկին զերկիր Հայաստան։

Բանաստեղծը երջանիկ անցյալին հակադրում է դաժան ներկան, սրան էլ՝ իր հույսն ու պայծառ հավատը։ Եվ, որքան էլ երկարաբան է նա, ընթերցողը

²⁴ «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց», էջ 59։

բազմազան դիպվածների ու բացատրությունների մեջ պիտի առանձնացնենք, ընկալելը գլխավորը, շկորցնելը լավ օրերի հավատը, երազանքը:

Ներսեսի մարգարեությանը Բաղիշեցին անդրադարձել է նաև «Ողբ մայրաքաղաքին Հստըմպօլու և վասն գալստեան ֆռանկ աղգին և ազատել զաշխարհս Հայաստանեաց» քերթվածում, և ինչպես նկատել է Հ. Անասյանը²⁵, Ֆլորենցիայի բանակցությունների ազդեցությամբ, նոր հանգամանք է ավելացրել ավանդական մարգարեությանը, գծելով խաչակիրների երթուղին, որ կրում է իր օրերի կնիքը. ֆրանկները նախ ազատագրելու են Պոլիսը, նոր միայն անցնելու են Նրուսաղեմ: Ողբի մեջ Բաղիշեցին խոսում է նաև «արմանք» հայորդիների մասին, որ առաջնորդելու են ֆրանկներին դեպի Արևելք, ազատելու են ոչ միայն Ստամբուլն ու Նրուսաղեմը, այլև Հայաստանը: Այստեղ բանաստեղծը հիշեցնում է, թե այդ ամենը «սուրբ հայրապետքն» են ասել, առաջին հերթին աչքի առաջ ունենալով Ներսեսին: Հայրապետներին էր հիշում Կարապետ Բաղիշեցին էլ իր նախահիշյալ տաղում.

Վրկայեալք եմ հայրապետք,
Եւ ուխտիւք մխիթարական
Լինի ձեզ ազատութիւն
Ի յազգէն այն արիական:

Առանձին հետաքրքրություն ունեն Մեսրոպի երկի՝ Հովասափ Սեբաստացու մշակումները, որոնք բանաստեղծին բնութագրում են որպես առաջադեմ գործչի և, ինչպես Ա. Հովհաննիսյանն է ասում, «ազատագրական տեսիլների ջերմեռանդ հավատավորի»: Ներսես Պարթևի պատմությունից Հովասափը մշակել է ոչ միայն տեսիլը, այլև Մուշեղ Մամիկոնյանին վերաբերող նյութերը («Օրհնեալ անուն արարչական», «Սո՛ւք աշխարհի Հայոց Մեծին»²⁶): Դրանց մեջ փառաբանվում է Մուշեղ Մամիկոնյանի հերոսությունը, հայրենասիրությունը: «Սո՛ւք աշխարհի Հայոց Մեծին» տողով սկսվող քերթվածում, խոսելով Պապի ու Ներսեսի մասին, բանաստեղծը գրում է.

Զի ի սոցա ժամանակին
Մուրող մարդ ոչ գտանէին,
Ամենեքեան ուրախ կային.
Քաջրն՝ պարիսպ ամենեքին:

Այստեղ մենք չենք տեսնում հայոց արքայի ու կաթողիկոսի հակադրությունը, և երկուսը հանդես են դալիս կողք-կողքի, միաբան: Բայց, չնայած դրան, նահանջելով պատմագրության համառ պնդումների առաջ, Հովասափն այնուամենայնիվ մասնակիորեն շեղվում է և տարտամ ակնարկություն անում.

Բայց բիրտ և սուպո ազգս անհնազան,
Օրինազանց էր մեծ արքայն.
Սպանին դեղով գտէր ներսէս՝
Զմարգարէ սուրբն ի լըման:

²⁵ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երեւան, 1957, էջ 10:

²⁶ Տե՛ս Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, 89—95 էջերը:

Այս երկու բանաստեղծությունը կարծես միասնական ամբողջություն են տեսիլի մշակման հետ, իբրև եռանկար։ Վերջինի մեջ միանում են անցյալը, ներկան ու ապագան, որի շնորհիվ շարքն ամբողջանում է, առիթ տալով լավատես մտորումներին։

«Հովասափ Սերաստացի» աշխատության մեջ շնորհալի բանասեր Վախթանգ Գևորգյանը, խոսելով Հովասափի՝ Արևմտյան Հայաստանի աչքի ընկնող գործիչների հետ ունեցած կապերի մասին, իրավացիորեն եզրակացնում է. «Հովասափը կանգնած էր Միքայել Սերաստացու, Արգար Թոխաթեցու և մյուս գործիչների ու մեծատունների դիրքերում և նրանց հրահրած շարժումը իր կնիքն էր դնում նաև նրա ստեղծագործության վրա... Հովասափ Սերաստացին իր ստեղծագործությամբ ամբողջովին հավաստում է ժողովրդի մեջ արթնացած այն հավատը, որը կապվում էր ազատության գաղափարի հետ։ Այն ժամանակ դա բնականաբար պիտի հանդես գար նաև «տեսիլային» գրականության նոր մշակումներով»²⁷։ Բայց ձիշտ կլինի՞ ասել, թե Ներսեսի տեսիլը մարգարեություն է պարունակում ամբողջ քրիստոնեության վերաբերյալ, իսկ Հովասափի մշակումը, հիմնականում հարազատ մնալով ավանդականին, որոշ հանգամանքներով արտացոլում է պատմական իրականությունը։ Նույնն է պարագան երկուսի մեջ էլ։ Երկուսն էլ միևնույն մտասեռումն ունեն՝ հայրենիքի ազատագրությունը և միաժամանակ չեն մոռանում մյուս ճնշված քրիստոնյա ժողովուրդներին. իսկ պատմական իրականությունը այս կամ այն չափով արտացոլված է թե՛ մեկի, թե՛ մյուսի մեջ։ Այդ բանը, ինչպես պետք էր սպասել, ավելի ակնհայտ է Հովասափի բերթվածում։ Սա ևս ժամանակի գրոշմն է։ Լինելով իր դարի հարազատ զավակը և ունենալով որոշակի նպատակ, հստակորեն գիտակցելով իր անելիքը, բանաստեղծն ուշադրությունը բեղեռել է միայն տեսիլի վրա, զանց առել Պատմության մեջ հիշվող մյուս բոլոր անցուդարձերը, դրանով իսկ իր խոսքը դարձնելով նպատակասլաց։ Այստեղ էլ արտահայտվել են թերևս վերոհիշյալ կապերը առաջավոր գործիչների հետ։ Նեոի գալստյան մասին Վալոցձորեցու գրքում կարդում ենք. «Ջարագործ նեոն առաւել երեցուցանէ նշանս, թէպէտ և ոչ իցէ ճշմարիտ։ Արդ՝ երանելիք են, որք յայնմ ժամանակի նահատակին»։ Հովասափն ավելի պարզեցրել է այս միտքը. այնքան դառն ու դժվար ժամանակներ են լինելու, որ կենդանի մնացողները՝

Երբան և մեռելոցքն երանի տան,
Թէ չէ՛ք հասել ի յայս չար ժամանակեան։

Ճիշտ այսպիսին էր Հովասափ Սերաստացու դարաշրջանը, և նրա ժամանակակիցներից մեկը՝ Հովհաննես Վարազացին, այդպես էլ գրել է.

Ո՛հ, քանի՞ն փափագեցայ
Ընդ սիրելեաց շուել առ տէր...

Հայերի ու առհասարակ արևելյան քրիստոնյաների աղետալի վիճակը պատկերելուց հետո Հովասափը առանձին ներշնչանքով է խոսում փրկության մասին, որ գալու է Արևմուտքից։ Դառն ժամանակներին հակադրում է իր երազանքը, որ զուրկ չէր իրական հողից.

²⁷ Նույն տեղում, էջ 34—35։

Յնծուքին բազմանան ի ժամանկեան,
Մինչ զի անպտղաբեր՝ ամէն պտուղ տան,
Պտուղ հողուն լինի մինն հաղարան,
Լիութեամբ և ուրախ հրելին և ցրնծան:

Հակադրությունն ավելի ցցուն է դառնում հաջորդ տան մեջ.

Վարսունենինգ տարի ի յայն բարութեան,
Հանցեղ, որ մեռելոց երթան և վալ տան.
Թէ չէ՞ հասել բարի յայս ժամանակեան,
Զի լինիցի որպէս գերկիւր պարգևեան:

Ի դեպ ասենք, որ նույնանման տողերով է նկարագրել երջանիկ ապագան նաև Ներսես Շնորհալին «Ողբ Եղեսիոյի» վերջում:

Գեղեցիկ է Հովասափ Սեբաստացու իղեալը. երազում է մի ժամանակ, երբ ո՛չ գող, ավաղակ, զրկող կա, ո՛չ մարդասպան, երբ «ո՛չ պիտոյանան սուսեր կամ ալ բան»: Այս ժամանակն ինչ-որ շափով հիշեցնում է Պապի ու Ներսեսի՝ Հովասափի նկարագրած ժամանակները, երբ մուրացկան չկար և բոլորը երջանիկ էին:

«Ոտանաւոր վասն տեսլեան Ներսէսի» քերթվածը, ինչպես և Հովասափ Սեբաստացու ամբողջ ժառանգությունը, լինելով խորապես հայրենասիրական ու մարդասիրական, հարազատ արտացոլումն է իր ապրած դարաշրջանի հայ կյանքի, մի հանգամանք, որով պայմանավորվում է նրա ստեղծագործության ճանաչողական արժեքը:

Տեսիլի մշակումներից բացի, միջնադարում բանաստեղծները (Հովհաննես Իմաստասեր, Ներսես Շնորհալի, Գրիգոր Խլաթեցի և ուրիշներ) Ներսես Պարթևին նվիրել են տաղ ու զանձ, հրգ ու ներբող, որոնց հիմնական բովանդակությունը, նպատակը կարելի է բանաձևել Հովհաննես Երզնկացու հանդիսավոր շարականի խոսքերով.

Քանզի էհաս յօգնութիւն օրինադրողն քաղաւորաց՝
Մարտակից զինուորական դասուն սուրբն Ներսէս,
Բարեխօսութեամբ սուրա, տէր, բարձրացո
Զիշխանութիւն քաղաւորական արոռոյ²⁸:

Տեսիլի մի հետաքրքիր արձագանքն ենք գտնում Մաշտոցի անվան Մատենադարանի № 3853 ձեռագրում, որ գրված է 1779 թ. Բաքվում: Ձեռագիրը բովանդակում է՝ «Մեսրոպայ Վայոցձորեցույ պատմութիւն Մեծին Ներսիսի», վերջում կա նաև Առաքել Բաղիշեցու նախահիշյալ քերթվածը: Հովհաննես քահանան, որ արտագրել է մատյանը, ներշնչվել է Ներսեսի կերպարով և 127բ—129բ էջերում դրել իր բանաստեղծությունը՝ «Ներբողեան տաղս քաղցրադոյն յորինեալ ի վերայ մեծին Ներսէսի, մեղաւոր և անարժան Յովհաննէս երիցւէս»: Բավական վարպետորեն զրկած այս «Ներբողեանը» բաղկացած է ութ քառատող տնից՝ կրկնականերով: Յուրաքանչյուր տուն առանձին է հանդավորված:

Հովհաննես գրիչը թուցիկ հիշատակում է Հուսիկին, Լուսավորչի դահի հաստատվելը Ներսեսի կողմից, «բաղում դահերի ու դավառների» նորոգումը,

²⁸ Ա. Ս ր ա պ յ ա ն, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 265:

Ներսեսի՝ Պապ թագավորից մահու գեղ առնելը, Եպիփանի ու Շաղիտայի տեսիլը, «դիվաց գնդերը» հալածելը, իսկ հետո բարեխոսություն է խնդրում.

Աղաչանոք խնդրեմ, ո՛վ բժշկարար,
 Մեռեալ հոգոյս իմոյ Կուս դու մեկ ճար,
 Ազատեա ի նշանաց հոգիս իմ խաւար,
 Առ Միածինն բարեխօս լեր անդադար:

Ներսես Պարթևի անունը միջնադարում անխզելիորեն կապված է եղել հայ ազատագրական երազանքին. նրան պատկերացրել են կամ ճանաչել որպես ինքնուրույն պետականության վերականգնման նախանձախնդրի ու մեծ հայրենասերի: Հենց դրանով էլ նա դարձել է այդ երազանքի խորհրդանիշը: Եվ հաճախ մեր բանաստեղծներն ու պատմիչները,՝ ժամանակագիրներն ու գրիչները իրենց երգերում ու հիշատակարաններում խնդրել են նրան բարեխոս լինել աստծու առաջ՝ ի փրկություն հայկազյան աշխարհի, ինչպես Հովհաննես Երզնկացու, Հովհաննես գրչի բանաստեղծություններում: Իսկ Ներսես Պարթևի անվան հետ կապված մարգարեությունը, մեծ տարածում գտնելով ամբողջ միջնադարում, երբեք չդադարեց հետաքրքրելուց ժողովրդի լայն խավերին, մանավանդ առաջագեմ գործիչներին, գրողներին: Այդ են վկայում ոչ միայն Մեսրոպ Վաչոցձորեցու գրքի վայելած ժողովրդականությունը, համառոտ ու ընդարձակ խմբագրություններով՝ բազմաթիվ ձեռագրերում ցրված լինելը, այլև տեսիլի մշակումներն ու ուղղակի արձագանքները: